«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Գոնդակյան Աշխեն

Ուսումնական հաստատություն՝ Դ. Հովսեփյանի անվ. հ. 191 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն …… 3

Մաս 1

Խաղը, որպես, ուսուցման կարևոր նախապայման, ռուսաց լեզվի ուսուցման դերը դպրոցում.

1.1 Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում……..... 5

1.2 Ուսումնական գործընթացում դերային խաղերի կրառման արդյունավետությունը……7

1.3 Ռուսաց լեզվի դասավանդման կարևորությունն ու անհրաժեշտությունը դպրոցներում……..……9

Մաս 2

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ռուսաց լեզվի դասընթաց……..……. 12

Իմ սեփական փորձը……..18

Եզրակացություն……..……19

Գրականության ցանկ……...……..…20

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Հայոց լեզուն՝ որպես Հայաստանի Հանրապետության պետական լեզու, այն առանցքն է, որի շուրջը ձևավորվում է հայկական ինքնությունը, քաղաքական, մշակութային, կրթական տարածքը, քաղաքացու անձնական ազատության, ազգային մտածողության պահպանման, ինչպես նաև որակյալ կրթություն ստանալու, օտար լեզուների տիրապետման գործոնը: Հայ երիտասարդների կողմից մի քանի օտար լեզուների տիրապետումը դարձել է ժամանակի, ինչպես նաև աշխարհում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացների պահանջը:

Ռուսաց լեզվի տիրապետումը հանդիսանում է քաղաքացու մրցակցային առավելությունը բարձրագույն կրթություն ստանալիս և մասնագիտական հմտություններ ձևավորելիս: Արտադրության, գիտության, կրթության և մշակույթի վերածնունդն ու զարգացումը, ինչպես նաև համաշխարհային հանրության հետ Հայաստանի մասնակցությունը աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական մարտահրավերների դիմագրավմանն ու գործընթացների իրականացմանը մեր երկրում առաջացնում են հայ երիտասարդության կողմից ռուսաց լեզվի ազատ տիրապետումն ապահովելու խնդիր և անհրաժեշտություն: Օտար լեզուների , մանսանվորապես, ռուսաց լեզվի ուսումնասիրումը երեխաները դեռ սկսում են մանկապարտեզից ՝ ինչպես լեզվին ծանոթանալու միջոց, իսկ արդեն դպրոցում, առավել մանրամասնորեն երեխաները սկսկում են ուսումնասիրել և սովորել ռուսաց լեզուն՝ որպես օտար լեզու:

Երեխաներին էլ առավել դասընթացի շուրջ կենտրոնացնելու, ավելի դասընթացին ներգրավվելու նպատակով՝ կարելի է և հարկավոր է դասընթացի շրջանակներում կիրառել խաղային տեխնոլոգիաները: Ի սկզբանե, խաղը հանդիսանում է երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոց:

Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում դիտվում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց:

Առանձնացվում են մի քանի տեսակի խաղեր, որոնք հաջորդում են իրար՝ երեխայի զարգացմանը զուգընթաց: Այդ խաղերն են ՝ ֆունկցիոնալ, դերային, սիմվոլային, ուսումնական խաղեր: Այս խաղերի որոշ տեսակներ ակտիվ կարելի է կիրառել ուսումնական գործընթացում: Հիմնվելով վերոհիշյալ փաստերի վրա՝ սահմանեցինք մեր աշխատանքի նպատակը:

Նպատակը

Մեր աշխատանքի նպատակն է ընդգծել օտար լեզուների, մանսավորապես, ռուսաց լեզվի դասավանդման կարևորությունը հանրակրթական դպրոցներում, նշել երեխաների կյանքում խաղի դերի և նշանակություն կարևորության մասին, ինչպես նաև ընդգծել խաղային տեխնոլոգիաների կիրառության նշանակությունն ու արդյունավետությունը ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում:

Մաս 1

Խաղը, որպես, ուսուցման կարևոր նախապայման, ռուսաց լեզվի ուսուցման դերը դպրոցում.

1.1 Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում.

Խաղը համարվում է առաջատար գործունեություն նախադպրոցական հասակի երեխաների համար: Բայց ոչ այն պատճառով, որ երեխաները մեծամասամբ զբաղված են խաղով, այլ այն, որ երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է տեղի ունենում: Այն նախատիպն է համարվում հետագայում բոլոր տեսակի գործունեությունների համար, քանի որ երեխաների խաղի միջոցով մոդելավորվում են մեծահասակների կատարած գործունեությունները[2]: Հոգեբանության մեջ խաղի վերաբերյալ բազմաթիվ տեսություններ են առաջացել: Կարլ Գրուսը գտնում էր, որ խաղը երիտասարդ օրգանիզմի անգիտակից նախապատրաստումն է կյանքին: Ըստ Զ. Ֆրեյդի երեխան խաղում է իր անլիարժեքությունից դրդված՝ այժմ հնարավորություն չունեալով լինելու բժիշկ, տիեզերագնաց: Որոշ հեղինաներ գտնում են, որ խաղը կուտակված ավելորդ էներգիայի վատնում է, երբեմն էլ՝ հաճույքի աղբյուր: Խաղը գործունեության տեսակ է, որի դրդապատճառները ոչ թե նյութական արդյունք և օգուտ ստանալն է, այլ հաճելի ապրումները, ընդունակությունների մարզումը, սոցիալական կապերի ստեծումը: Խաղի տևողությունը 3-4 տարեկան երեխաների մոտ տևում է 10 րոպե, 4-5 տարեկանների մոտ՝ 40-50 րոպե, ավագ դպրոցականների մոտ՝ մի քանի ժամ և կարող է շարունակվել նույնիսկ մի քանի օր [1]:

Խաղը երեխայի հիմնական գործունեությունն է: Ս. Լ. Ռուբինշտեյնը նշել է, որ խաղը պահպանում և զարգացնում է մանկականը երեխաների մեջ, նա նրանց կյանքի դպրոցն է և պրակտիկայի զարգացումը:

Դ. Բ. Էլկոնինայի կարծիքով (1978)՝ «խաղում ոչ միայն զարգանում կամ նորից ձևավորվում են առանձին ինտելեկտուալ օպերացիաներ, այլ նաև արմատապես փոխվում է երեխայի տեսակետը շրջակա միջավայրի նկատմամբ, ձևավորվում է

տեսակետի հնարավոր փոփոխությունների մեխանիզմ և համաձայնեցում իր տեսակետը ուրիշների տեսակետի հետ»[2]: Խաղը երեխաների համար իրական կյանքի հետազոտման և ժամանակի ու տարածության մեջ կողմնորոշման միջոց է: Խաղի միջոցով երեխաները ազատվում են սթրեսներից, հաղթահարում տարբեր դժվարություններ՝ այդպես նախապատրաստվելով հասուն կյանքի պարտականություններին: Խաղալիս երեխաները դառնում են ավելի ազատ ու անկաշկանդ, ինչպես նաև յուրացնում են նոր հմտություններ:

Ներածությունում առանձնացրել էինք խաղերի տեսակները, կարճ խոսենք դրանց մասին:



- Ֆունկցիոնալ խաղեր. Ֆունկցիոնալ խաղերի հիմնական դրդապատճառը հաճելի հույզեր ունենալն է. դիտվում է մարդու ողջ կյանքի ընթացքում, բայց որպես առաջատար տեսակ պահպանվում է մինչև երկու տարեկան հասակը: Ֆունկցիոնալ խաղերի մնացորդներից է համարվում, օրինակ, խոսելիս որևէ առարկա խաղացնելը:

- Սիմվոլային խաղեր. Ֆունկցիոնալ խաղերից անցում է կատարվում սիմվոլային խաղերի: Սիմվոլիկ խաղերը այն խաղերն են, երբ մի առարկային վերաբերում են որպես ուրիշի, որը տվյալ պահին գոյություն չունի:

Օրինակ, երբ երեխան վերցնում է փայտը, հեծնում և վերաբերվում դրան ինչպես ձիու: Ենթադրվում է, որ հենց այս խաղերում է երեխայի մոտ ձևավորվում և ամրապնդվում հաջորդականությունն ըմբռնելու կարողությունը:

- Դերային խաղեր. Դերային խաղերը սկսում են առաջանալ արդեն երեքից-չորս տարեկանում: Այս խաղերով երեխան ընդօրինակում է մեծահասակների վարքը, նրանց դերերը՝ հոր, մոր, բժշկի, խանութպանի և այլն: Դերային խաղերը նպաստում են սոցիալական հմտությունների ձևավորմանը:
- Ուսումնական խաղեր. Առանձնացվում է նաև ուսումնական խաղը, որը օգտագործվում է որպես ուսուցման և դաստիարակության միջոց: Ուսումնական խաղի անվան տակ պետք է նկատի ունենալ այնպիսի գործունեություն, որի ընթացքուն երեխաները ստանում են որոշակի գիտելիքներ և ունակություններ: Ուստի ուսումնական խաղը նախատեսվում է ուսուցանելու համար[1]:

Այս համատեքստում, կարող ենք առանձնացնել «դերային» խաղային տեխանալոգիան, որպես դասընթացի անցկացման արդյունավետ միջոց:

1.2 Ուսումնական գործընթացում դերային խաղերի կրառման արդյունավետությունը.

Խաղերի տեսակների համատեքստում, ինչպես նշել ենք վերևում, առանձնացնում ենք դերային խաղերը, որը պատկանում է այն խաղի տեսակին, ինչը կարելի է հետաքրքրիր կերպով ներմուծել ուսումնական գործընթաց:

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում:

Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում: Այդ իսկ պատճառով խաղային գործունեությունը հարկավոր է տեղափոխել դպրոցական ուսուցման շրջան, այդ դեպքում երեխայի ներքին հնարավորությունները ավելի ազատ են զարգանում[3]: Դերային խաղերը հասարակության հետ պրոեկտման վերաբերմունք են: Հասակակիցների դերային խաղերը օգնում են կառուցել հարաբերություններ ընկերների հետ, պաշտպանել սեփական հետաքրքրությունները և հաշվի առնել այլ մարդկանց ցանկությունները: Խաղի մեջ փոքրիկը ձեռք է բերում հմտություններ, որոնք պետք կգան ուսումնական գործընթացում: Երեխային խաղի մեջ ներգրավելուն միտված այդ բոլոր միջոցներն ունեն մեկ նպատակ՝ դաստիարակել ներդաշնակ զարգացած, հաջողված անձնավորություն: Կատարելով որևէ դեր՝ երեխան ձգտում է՝ ըստ համապատասխան իրավիճակի դրսևորել այն և հասցնել ավարտին: Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ընդունակությունները [3]:

Դերային խաղի գործողությունները ծավալվում են այդ խաղի աշխարհում: Այդ աշխարհը կարող է լինել ամբողջովին հորինված, կամ հիմնված լինել ինչ որ գրքի կամ ֆիլմի, կամ մի իրադարձության սյուժեի վրա: Այսպիսի խաղերում շատ հաճախ բացակայում է վերջնական նպատակը և խաղի իմաստը կայանում է այդ խաղային աշխարհի ուսումնասիրումը: Դերային խաղն ունի ուսուցանող, դաստիարակող և պրակտիկ մեծ հնարավորություններ: Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է: Հոգեբանների կարծիքով դասապրոցեսում խաղի մրջոցով ստեղծված խթանումը (խաղային խթանումը) պետք է կիրառվի ճանաչողական, էսթետիկական, հաղորդակցական խթանումների հետ միասին: Խաղի ընթացքում երեխան գտնվում է խոսքային պատրաստակամության մեջ, ուշադիր լսում է ուսուցչին և ընկերներին: Անընդհատ կրկնվող բառերը չեն հոգնեցնում ու ձանձրացնում նրան: Երեխան սիրում է պատմության մասնակից լինել. գոնե իր անունը դրանում հնչի:[4]

Այս ամենի հիման վրա, ուսումնական գործընթացում, որպես դերային խաղ կարելի է առանձնացնել «դերային ընթերցանությունը» (ընթերցանության անցկացումը երեխաների միջև դերային բաշխմամբ) : Սա յուրաքանչյուր երեխայի տալիս է հնարավորություն պատկերացնել և զգալ իրեն այլ անձի կամ կերպարի փոխարեն, ապրել տվյալ կերպարի էմոցիաները, խոսել իր լեզվով և խաղալ իր դերը: Այս խաղային տեխնոլոգիայի միջոցով, ոչ միայն երեխային ներգրավվում ենք, առավել հետաքրքիր կերպով,անցակցնում ենք ընթերցանությունը այլև թույլ ենք տալիս իրեն զգալ ազատ և զգալ տվայալ կերպարի առանձնահատկությունները:

Տվյալ խաղաին տեխնոլոգիան առավել հեշտացնում է աշխատանքը տրված ընթերցանության նյութի հետ, առավել հեշտ է ընկալվում աշակերտի կողմից և հետագայում առավել դյուրին է տրվում ընթերցանության նյութի շուրջ տարվող հետագա աշխատանքը[5]:

Դերային ընթերցանությունը, որպես խաղային արդյունավետ տեխնոլոգիա , ինչպես նշեցինք, հետագայում ևս ավելի է հեշտացնում տեքստի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ: Երեխային տրվում է հարցեր տեքստի, իր «մարմնավորած» կերպարի շուրջ ՝ մանրամասնելով կերպարի դրական և բացասական կողմերը: [3]

1.3 Ռուսաց լեզվի դասավանդման կարևորությունն ու անհրաժեշտությունը դպրոցներում.

Ռուսաց լեզվի դերն ու տեղը ցանկացած բազմազգ միջավայրում միշտ սահմանվում է ոչ միայն էթնիկ, այլև սոցիալական և մշակութաբանական գործոններով, ինչպես նաև քաղաքական ուղղվածությամբ: Եվ Հայաստանն այս հարցում բացառություն չէ: Դեռևս Պետրոսի Առաջինի ժամանակներից Հայաստանը եղել է մի երկիր, որտեղ ռուսերենին արժանացրել են մեծ ուշադրություն՝ պատմական և աշխարհաքաղաքական իրողությունների լույսի ներքո[5]: Հայերի շրջանում ռուսերենով շփման ավանդույթը սկսել է ակտիվորեն ձևավորվել դեռևս 19–րդ դարում, երբ ձեռներեց Իվան Լազարևը Մոսկվայում հիմնեց Արևելյան լեզուների լազարյան ինստիտուտը: Ռուսական մշակույթի կենտրոնում գործող ինստիտուտում հայերի և ռուսների համատեղ ուսուցումն ինստիտուտի

հիմնադիրների կողմից դիտարկվում էր որպես բացառապես օգտակար քաղաքացիական նախաձեռնություն երիտասարդ սերնդի դաստիարակության և ռուսական ու եվրոպական մշակույթին հաղորդակից դարձնելու գործում[4]:

Նախորդ դարի 20–ականներին երիտասարդ Հայկական հանրապետությունը դառնում է ամենատարբեր մասնագիտությունների հայ մտավորականների ձգողականության կենտրոն, ովքեր սկսում են ժամանել Հայաստան, այդ թվում՝ Ռուսաստանից: Խորհրդային տարիները կարելի է համարել Հայաստանում ռուսերենի ծաղկման շրջան, իսկ ռուսական մշակույթն ու գրականությունը դառնում են հայկական հասարակության հոգևոր կյանքի անբաժանելի մասը: Եվ զարմանալի չէ, որ սկսած 30–ականներից ռուսերենի դասավանդումը դառնում է պարտադիր Հայաստանի կրթական համակարգում, և ոչ միայն Հայաստանի: Բոլոր խորհրդային հանրապետություններում, ԽՍՀՄ ղեկավարության որոշմամբ (1938թ.), ռուսաց լեզվի դասավանդումը դպրոցներում դառնում է պարտադիր: Արդյունքում, բոլորը սկսում են տիրապետել ռուսերենի, ինչն ուներ տրամաբանական բացատրություն, երկրում, որտեղ բնակվում էր ավելի քան 100 ազգ, անհրաժեշտ էր ունենալ ազգամիջյան շփման լեզու, որը հասկանալի կլիներ բոլորին: Ինչպես իր հրապարակումներից մեկում նշում է Հանրակրթական դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների հայկական ասոցիացիայի նախագահ Լիլյա Բալասանյանը, 20–րդ դարում Հայաստանում հրատարակվում են ոչ միայն ռուսաց լեզվի դասագրքեր, այլև մեթոդաբանական ձեռնարկներ[5]:

Այսպիսով, հայ դպրոցականներին ռուսաց լեզվի դասավանդումը դառնում է ազգային դպրոցում ռուսաց լեզվի ուսուցման մեթոդաբանության ինքնուրույն ուղղություն: 1938թ.–ին Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում բացվում է ռուսաց լեզվի և գրականության բաժին, որի հիման վրա հետագայում՝ 1976թ.–ին, ստեղծվում է ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը, հիմա այն կոչվում է Ռուս բանասիրության ֆակուլտետ: Հանրապետության գրեթե բոլոր բուհերում սկսում են գործել ռուսաց լեզվի ամբիոններ: Երկրում բացվում են ռուսական դպրոցներ, իսկ հայկական դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդումը սկսվում է տարրական դասարաններից: Ռուսաց լեզվի իմացությունը ձեռք է բերում

կարևոր կրթական նշանակություն նաև այն պատճառով, որ նախորդ դարի առաջին կեսին գրեթե ամբողջ մասնագիտական գրականությունը ռուսերեն էր, և որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ էր լավ ռուսերենի իմացություն։Հայաստանում ամենատարածված լեզուն հայերենից հետո դառնում է ռուսերենը, ինչը ցայտուն երևում էր մշակութային ոլորտում: Չէ որ պատահական չէ, որ 1938թ.-ին ստեղծված Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնը դառնում է Հայաստանի ամենաառաջատար թատրոններից մեկը: Թատրոնի կայացման պատմությունը հայ և ռուս վարպետների ջանքերի բեղմնավոր միաձուլման հիանալի օրինակ է: Թատրոնի զարգացման գործում մասնակցել են հայ ականավոր թատերական գործիչներ, ժողովրդական արտիստներ Լ. Քալանթարը, Վ. Աճեմյանը, Ա. Գուլակյանը, Ա. Բուրջալյանը, իսկ ռուսական (խորհրդային) ռեժիսորական արվեստի խոշոր գործիչներ, ժողովրդական արտիստներ Ա. Ռիդալը, Բ. Ֆիլիպովը, Պ. Լուկերը, Յա. Կրասնոպոլսկին և բազմաթիվ այլ գործիչներ զարգացնում էին կոլեկտիվի գեղարվեստական ճաշակն ու թատերական մշակույթը[6]:

Հետադարձ հայացք գցելով՝ ինչպես այսօր, այնպես էլ անցած տարիներին՝ կարող ենք ամփոփելով ասել, որ խորհրդային մոնոէթնիկ Հայաստանում ռուսերենի ներկայությունը հայերենի հետ համատեղ, անկասկած, դրական ազդեցություն է ունեցել երկրի բնակչության ընդհանուր ինտելեկտուալ, կրթական և մշակութային մակարդակի վրա: Այսօր ևս ռուսաց լեզուն պատկանում է օտար լեզուներից ամենապանջվածների ցանկին, քանզի ամբողջ աշխարհում ռուսերեն խոսում է մոտ 300 մլն մարդ:

Դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման կարևորության հաեցակարգում , երեխաները այն սկսում են ուսումնասիրել 2-րդ դասարանից (որոշ դպրոցներ անգամ 1-ին դասարանց): Հենց սա է խոսում դպրոցներում օտար լեզվի ՝ ռուսերենի, ուսուցման կարևորության մասին[4]:

Մաս 2

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ռուսաց լեզվի դասընթացի.

Ժամանակակից աշխարհում, դպրոցի գլխավոր նպատակը հանդիսնում է երեխաների բազմակողմանի զարգացումը, իրենց հետաքրքրությունների բացահայտումը, ինքնակրթմանն հմտությունների և իհարկե ստեղծագործական հմտությունների ձևավորումը:

Դպրոցը, երեխաներին պետք է նախապատրասի կյանքին: Այդ իսկ պատճառով դպրոցի հիմնական խնդիրը հանդիսանում է երեխաների գիտակցական և ստեղծագրծական հմտությունների զարգացումը: Այդ գործընթացը ներազդում է երեխայի որպես անհատ անձի ձևավարման փուլերի վրա, երեխայի մոտ արթնացնում է նախաձեռնողականություն և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը, ինչպես նաև տալիս է ինքնարտահայտման սովորույթներ և ինքնավստահություն[7]:

Այսօր, արդեն, շատ մանկավարժներ գիտակցում են, որ ուուցման նպատակը, դա ոչ միայն որոշակի գիտելիքների և հմտությունների ձեռքբերումն է, այլև երևակայության, հետաքրքրողականության և ստեղծագործող անհատ ձևավորելու կարևորությունն է:

Ստեղծագործությունը մարդու անձի, մտածողության, գիտակցության, ինտելեկտի մշտական կատարելագործումն է և նոր բան անելու մշտական ձգտումը, ավելին և ավելի լավը, քան նախկինում: Ստեղծագործական գործունեության մեջ աշակերտը զարգանում է, ձեռք է բերում սոցիալական փորձ, բացահայտում իր բնատուր տաղանդներն ու կարողությունները, բավարարում իր հետաքրքրություններն ու կարիքները:

Ամենաարդյունավետ միջոցներից մեկը, որը կարող է հետաքրքրություն առաջացնել ռուսաց լեզվի դասերին, խաղային տեխնոլոգիաներն են։ Խաղի նպատակը գիտելիքի, գիտության, գրքերի, ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է։ Կրտսեր դպրոցական տարիքում խաղը, սովորելուն զուգահեռ, կարևոր տեղ է գրավում երեխայի զարգացման գործում [7]։ Երբ երեխաները ընդգրկվում են խաղային տեխնոլոգիաներով լեցուն դասընթացին, կրթական գործունեության նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ աճում է, նրանց համար ուսումնասիրվող նյութը դառնում է ավելի մատչելի, և նրանց աշխատունակությունը զգալիորեն մեծանում է։ Ի վերջո, այն, որ խաղը ուսումնական գործընթացի մաս է, ոչ մեկի համար գաղտնիք չէ։ Խաղն օգնում է ձևավորել բառի հնչյունաբանական ընկալումը, հարստացնում է երեխային նոր տեղեկություններով, ակտիվացնում մտավոր գործունեությունը, ուշադրությունը, ամենակարևորը խթանում է խոսքի բնականոն զարգացմանը։ Արդյունքում երեխաների մոտ հետաքրքրություն է առաջանում ռուսաց լեզվի նկատմամբ։ Էլ չենք խոսում այն մասին, որ ռուսաց լեզվով խաղային տեխնոլոգիաները նպաստում են կրտսեր աշակերտի ուղղագրական հմտությունների ձևավորմանը։ Ռուսաց լեզվի դասերին խաղային տեխնոլոգիաների օգտագործումը.

- Օգնում է վերացնել մի շարք դժվարություններ, կապված հանձնարարված նյութը հիշելու հետ
- Ռուսաց լեզվի նկատմամբ առաջացնում է ճանաչողական հետաքրքրություն որպես ուսուցման համար կարևոր առարկա
- Նպաստում է բառապաշարի հարստացմանը
- Ընդլայնում է աշխարհհայացքը
- Դաստիարակում է ստեղծագործ մարդու որակներ՝ նախաձեռնողականություն, հաստատակամություն, նպատակասլացություն, ոչ ստանդարտ իրավիճակում լուծում գտնելու կարողություն[8]։

Խաղի ձևերը ռուսաց լեզվի դասին.



Տարրական դպրոցում, անցկացված հետազոտությունների արդյունքում, հեղինակը նշում է, որ նկատեց, որ ռուսաց լեզվի դասերը միշտ չէ, որ հետաքրքրություն են առաջացնում աշակերտների շրջանում: Որոշ երեխաներ դա ձանձրալի են համարում: Մտածեց, թե ինչպես հետաքրքրություն առաջացնել դասերի նկատմամբ, ինչպես բարելավել գրավոր խոսքը: Զվարճալի խաղային տեխնոլոգիաները կարևոր դեր են կատարում ուսուցման գործընթացի ժամանակ: Նպաստում են լարվածության թուլացմանը և գրելու գործընթացի հանդեպ վախի նվազեցմանը և վերացմանը: Ինչպես նաև դասերի ժամանակ ստեղծում է դրական էմոցիոնալ միջավայր: Երեխան հաճույքով կատարում է ուսուցչի կողմից տրված ցանկացած առաջադրանք և վարժություն: Իսկ ուսուցիչը, այդպիսով, խթանում է աշակերտի ճիշտ խոսքը՝ թե՛ բանավոր, թե՛ գրավոր գործընթացներում[7]:

Պրակտիկայում կարելի է օգտագործել տարբեր խաղային տեխնոլոգիաներ, որոնք ուղղված են ստեղծագործական գործունեության հոգեբանական գործընթացների զարգացմանը. մտքի ճկունություն, համակարգված և հետևողական մտածողություն, կայացրած որոշումների պատասխանատվություն.

- Խմբավորել բառերը ըստ ընդհանուր հատկանիշի
- Սահմանափակ ժամանակում այս տառերից բառեր կազմել. . .
- Գտնել կապեր առարկաների և իրադարձությունների միջև. . .
- Բառերով նշել առարկայի էական հատկանիշները.
- Բառերի շարքում ընդգծել ավելորդ բառը.

<u>Խաղեր «Գոյական» թեմայով</u>

1. «Կլոր ակնոցներ». Անվանեք առարկաները, որոնք կլոր են:

2. Անվանի՛ր երկու առարկա, որոնք ունեն երեք հատկանիշ՝ մուգ, ծանր, աղմկոտ

3. Նշի՛ր ավելորդ բառը՝ ночь, печь, дочь, ключ, вещь.

4. Անվանե՛ք այնքան բառեր, որքան կարող եք՝ նշելով մի բան, որը կարող է թռչել, սուլել, երգել

5. Կազմե՛ք որքան հնարավոր է շատ բառեր՝ օգտագործելով «գրադարան» բառի տառերը[9]:

<u>Խաղեր «Ածական անուն» թեմայով .</u>

1) Գտեք սխալը. Սեղանին երկու խնձոր կա՝ մեկը կանաչ, մյուսը՝ թթու:
2) Նշիր, թե , ինչով են միմյանցից տարբերվում մատիտը և սեղանը , ինչն է ընդհանուր դրանց միջև (карандаш, стол)
3) Մեկ րոպեում նշիր 10 բառ մոտ (հակառակ) իմաստով:
4) Անվանիր բոլոր բառերը նկարագրող մեկ բառ ՝ ջուր, երկինք, զգեստ
5) Կազմի՛ր «մաքուր» ածականով արտահայտություններ (տետր, ձեռքեր)

Խաղեր «Բայ» թեմայով.

1. Անվանեք բոլոր բառերը, որոնք իրենցից ներկայացնում են գործողություն.(վերցնել, բացել, շուռ տալ…)

2. Բառերի զույգերը միացրե՛ք նախադասությամբ կամ գործողությունով. (թռիր - մարդ, գիրք -կարդա, վազիր – փողոցով, կոկորդիլոս- գնացք): (Գտեի տարօրինակ և ավելորդ բառակապակցությունը)

3. Եթե դու կախարդ լինեիր, ի՞նչ գործողություններ կանեիր:

5. Ընտրի՛ր ամենահարմար բառը: Բացատրիր քո ընտրությունը: Արջերը շատ վախեցան և ... (վազեցին, գնացին, լողացին, շտապեցին) (побежали, пошли, поплелись, помчались) դեպի կողք[6];

Խաղեր «Նախադասություն» թեմայով

1. Մտածեք մի նախադասություն, որի բառերը սկսվում են նշված տառերով՝ Զ,Վ,Մ,Ս:

2. Ընտրիր պատճառը և բացատրիր քո ընտրությունը. Զյունը սկսկեց հալվել, քանի որ…. (պայծառ շողում էր արևը, փչում էր հյուսիսային քամին, եկավ գարունը, ջերմաստիճանը դրսում դարձավ 0-ից բարձր):

3. Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով բոլոր երեք բառերը: (Տատիկ, ծաղրածու, պալատ; հայելի, ավազակ)[5].

Ցանկացած ստեղծագործական խաղ կարելի է օգտագործել մի քանի անգամ: Որպեսզի դրա նկատմամբ հետաքրքրությունը չպակասի, խաղերը կարելի է անցկացնել մրցույթի տեսքով՝ սահմանելով կանոններ ։ Այս գործընթացում ներգրավելով աշակերտներին ՝նրանք ցույց կտան իրենց երևակայությունը , միգուցե փոխեն խաղը, կամ գուցե նորը ստեղծեն, նրանք կխաղան ոչ միայն դասին, այլև դպրոցական ժամերից դուրս: Հիմնական բանը յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն տալն է հանդես գալ իր սեփական մտքերով: Ստեղծագործական խաղի կիրառումը դասարանում ընդլայնում է երեխաների երևակայության շրջանակը, զարգացնում երեխաների խոսքը, սովորեցնում համեմատել և վերլուծել,

եզրակացություններ անել: Հետաքրքիր է նաև երեխաների համար դերային խաղերը: Դասը նրանց համար դառնում է հետաքրքիր և ոչ թե ձանձրալի[8]:

Միջին դասարաններում դասը առավել հետաքրքիր դարձնելու նպատակով կարելի է կիրառել հետևյալ խաղային տեխնոլոգիաները.

«Միարմատ բառեր » թեմայի ուսումնասիրման ժամանակ կարելի է կիրառել «Աստիճան» խաղային տեխնոլոգիան. Աշակերտներին առաջարկվում է լրացնել բաց թողնված հատվածը որևէ ընդհանուր արմատով;

….лис….
….лис….
….лис….
….лис….
….ход….
….ход….
….ход….

Այս տաիրքային խմբում կարելի է հետաքրքիր կերպով անցակցնել խաղ-վիկտորինաներ.

1. Ո՞ր այբուբենն է կազմված յոթ տառից; (պատ.՝ այբուբեն)

2. Ի՞նչ ենք մենք լսում դասամիջոցի(перемена) վերջում և դասի (урок) սկզբում (պատ.՝ ձայնավոր հնչյուններ)

3. Կա խնձորում (яблоко) և սալորում (слива), իսկ այգում (сад) չկա; կա սոխում(лук) և աղցանում(салат) , իսկ այգում (огород) չկա, ի՞նչն է դա . (պատ.՝ Լ հնչյունը)

4. Կա գետում (река) և լճում(озеро), իսկ ջրում(вода) չկա, կա վարունգում(огурец) և ձմերուկում(арбуз) , իսկ սեխում (дыня) չկա ի՞նչն է դա . (պատ.՝ Ռ հնչյունը);

5. Ո՞ր դերանունն է փոխվում կապի եթե կարդանք հակառակ ուղղությամբ (պատ.՝ он-но)

6. Շաբաթվա ո՞ր օրը ունի երկու բաղաձային (պատ.՝суббота)

7. Ո՞ր թվականն է հրամայում մաքրել (тереть) (պատ.՝Три)[9];

Իմ սեփական փորձը

Իմ սեփական փորձի հիման վրա ՝ աշխատանքի ընթացքում, կիրառեցինք դերային խաղերի տեխնոլոգիան: Դասընթացը իրականացրել ենք 4-րդ դասարանի 2-րդ կիսամյակում, երբ աշակերտներին հանձնարարված էր ներկայացնել իրենց, նախապես տրված հեքիաթների ցանկից, որևէ մի հեքիաթ: Դասընթացը իրակացվել է դերային խաղային տեխնոլոգիայի շրջանակներում: Յուրաքանչյուր երեխա ստացել է հնարավորություն ընտրել իրեն հոգեհարազատ, դուրեկան հեքիաթ: Այս ամենը խոսում է այն մասին, որ տվյալ խաղային տեխնոլոգիան երեխաներին տալիս է հնրավորություն ինքնուրույն կայացնել որոշումները, ձևավորում և զարգացնում է երեխաներին որպես անհատների:

<u>Դասի ընթացքը.</u>

Դասարանը կիսվեց խմբերի: Արդեն նախապես պատրաստ հեքիաթների ցանկից, յուրաքանչյուր խումբ ստացավ իրեն կողմից ներկայացվելիք հեքիաթի անվանումը: Յուրաքանչյուր խումբ ներկայացրեց հեքիաթը յուրովի՝ օգտագործելով հեքիաթին համապատասխան առարկաներ(օրինակ՝ սպասք, խաղալիքներ և այլն): Աշխատանքի վերջում, բոլորի մասնակցությամբ, գնահատում ենք յուրաքանչյուր խմբի աշխատանքը: Հեքիաթը լավագույնս ներկայացրած խմբին որպես խրախուսնաք, տրվում է հնրավարություն, հաջորդ նույնանման դասընթացի ժամանակ ինքնուրույն ընտրել այն հեքիթը, որը կցանկանան ներկայացնել:

Տվյալ տարբերակով կարելի է աշխատել բոլոր դյուրըմբռնելի հեքիաթների հետ, որոնք տրված են տնային ընթերցանության համար: Հետագայում, խրախուսվում է ընտրել հեքիաթներ աշակերտների ցանկությամբ:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը, աշխատանքի առաջին մասում խոսեցինք երեխայի կյանքում խաղի դերի և նշանակության մասին, ինչպես նաև դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման կարևորության մասին: Որպես, առհասարակ, հետաքրքիր ուսուցման և ընթերցանության տարբերակ առանձնացրեցինք դերային խաղերի տեխնոլոգիան:

Աշխատանքի երկրորդ մասում մանրամասնորեն խոսեցինք ռուսաց լեզվի դասընթացների ժամանակ խաղային տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունների և կարևորության մասին, ինչպես նաև ներկայացրեցինք տարրական և միջին դասարաններում կիրառվող մի քանի խաղային տեխնոլոգիաներ, որոնք առավել շատ կներգրավվեն աշակերտներին դասընթացին և կհետաքրքրացնեն այն:

Խաղի նշանակությունը պետք չէ գնահատել միայն, որպես ժամանցի ձև , դրանում էլ հենց կայանում է իր հզորությունը, այլև գնահատել միջոց, որը քեզ տալիս է հնարավորություն ստեղծագործելու, երևակայելու և ապահովելու կյանքդ նոր հետաքրքրություններով: Այս ամենը կօգնի և կապահովի ռուսաց լեզվի ուսուցման և դասավանդման նոր մակարդակ:

Գրականության ցանկ

Ավդալյան Անահիտ –« Ուսումնական խաղ» Երևան 2013 [1]

Սաֆարյան Ա. Ն. – «Դերախաղի նշանակությունը երեխայի զարգացման գործում» Երևան , 2013 [2]

Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980 [3]

Գյուլամիրյան Ջ. - «Խաղալով սովորենք» Երևան, 2009 [4]

Выготский Л.С. Игра и ее роль в психическом развитии ребенка // Вопросы психологии. - 2006. [5]

Шмаков С.А. Игры учащихся - феномен культуры. - М., 1994. [6]

Лопатин В.В., Лопатина Л.Б. Малый толковый словарь русского языка.- М., 1993. [7]

Удальцова Е.И. Дидактические игры в воспитании и обучении дошкольников. - Минск, 1976. [8]

https://newsarmenia.am/am/news/society/Rusac-lezun-Hayastanum-/ [9]